

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Սյունիքի մարզի «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը ս/թ հուլիսի 21-ից հայտարարում է մրցույթ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի թափուր պաշտոնի համար՝ 0,625 դրույքաչափով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը: <https://escs.am/am/news4652>

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- 1) դիմում
- 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
- 3) անձը հաստատող փաստաթուղթ.
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
- 5) ինքնակենսագրություն
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթը անց է կացվելու 2022թ. օգոստոսի 23-ին՝ ժամը 10: 30-ին, ք. Սիսիան, Սիսական 17 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8.30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը մինչև 2022թ. օգոստոսի 17-ը, ժամը 17: 30-ը:

Մրցույթին մասնակել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել նաև sisian.am կայքում:

Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝

<https://escs.am/am/news/11978>

Տեղեկությունների համար զանգահարել՝ 028323280 հեռախոսահամարին կամ այցելել << Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ:

Հասցե՝ ք.Սիսիան, Սիսական 17

Էլ. փոստ՝ tiv1nuh@sisian.am